Արձանագրություն N 6

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԱՎՎ/2024/Հ-15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **<< 15>> 03. 2024թ.**

ժամը 12:00

Մասնակցում էին՝

- ՀՀ ՆԳՆ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի պետ Գ. Գրիգորյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Մուշեղյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Դ. Մկրտչյան (գնահատող անդամ),
- ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **տոներային քարթրիջների** ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԱՎՎ/2024/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց.

1. ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԱՎՎ/2024/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և Անտիսիգնում ՍՊԸ -ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնավորապես՝ հայտում կցված դիմում հայտարարությունը ստորագրված չէր էլեկտրոնային ստորագրությամբ, և բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Ինչպես նաև տեխնիկական բնութագրին համապատասխան անհրաժեշտ էր բոլոր չափաբաժինների մասով նշել, թե որ տպիչ սարքի համար են նախատեսված առաջարկվող տոներային քարտրիջները: Մասնակցի կողմից շտկում չի կատարվել:

2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԱՎՎ/2024/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Հանձնաժողովի կողմից կձեռնարկվեն միջոցներ Անտիսիգնում ՍՊԸ-ին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մուշեղյան

Դ. Մկրտչյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան